



Չրույցներ թեյի սեղանի շուրջ / 11.09.10



ՄԻԱԿ-ում ձևավորվեց նոր ավանդույթ՝ մեկնարկեց «Չրույցներ թեյի սեղանի շուրջ» հանդիպումների շարքը: Նման հանդիպումները անսախադեպ են տարածաշրջանում՝ թե՛ ձևաչափով, թե՛ նպատակներով և թե՛ հիմնախնդիրների բացահայտման ձևով: Նախաձեռնության հեղինակների խոսքերով, այսօրինակ հանդիպումներն իրենցից ներկայացնում են «կենդանի մոնիտորինգ» և կոչված են համախմբելու կանանց, կայացնելու նրանց միջև երկխոսության հաստատումը՝ միասնական աշխատանքի արդյունքում զգալի դրական փոփոխությունների հասնելու համար:

ՄԻԱԿ-ի Կանանց ակումբի հանդիպումները ընթանալու են «Չրույցներ թեյի սեղանի շուրջ» ձևաչափով՝ ոչ պաշտոնական և անկաշկանդ միջավայրում: Ներկա են լինելու ինչպես ՄԻԱԿ-ի, այնպես էլ հասարակական և քաղաքական այլ կազմակերպությունների կին անդամներ, հետաքրքրված այլ անձինք (հիմնականում կանայք): Հանդիպման հյուրերը լինելու են հասարակական, քաղաքական, բիզնեսի և սպորտի ասպարեզում կայացած/ հաջողությունների հասած անձինք: Կանայք, անկախ իրենց քաղաքական հայացքներից և համոզմունքներից, ներկայացնելու են իրենց կարծիքը ոլորտում առկա թերությունների, խնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ և ստեղծելու են միասնական ցանց, նոր ուժ, որն ի վիճակի կլինի հասնելու իր դեմ դրված խնդիրների լուծմանը:

Սույն թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ առաջին հանդիպումը, որին հրավիրված էին հեռուստահաղորդավար և դերասանուհի Նազենի Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյանը և նկարիչ-դիզայներ Հռիփսիմե Մարգարյանը: Հյուրերի շարքում որպես փորձագետ հրավիրված էր նաև ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Նվարդ Մելքոնյանը, Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի ղեկավար Լիանա Մարուքյանը և նրա օգնական Մարիամ Առաքելյանը: Գեղեցիկ և հարմարավետ սրճարանում 2 ժամից ավել տևած այս հավաքի ընթացքում բարձրացվեցին ամենատարբեր կարծիքներ բոլորին հուզող հարցի՝ կրթական համակարգի՝ մանկապարտեզների և դպրոցների ներկա իրավիճակի մասին:

Նշենք, որ նախաձեռնության հեղինակներն են ՄԻԱԿ-ի քարտուղարներ Նաիրա Կարապետյանը, Ինգա Հարությունյանը և Խորհրդի անդամ Լիա Խաչատրյանը: Միջոցառման իրականացմանը մեծապես աջակցել է Կոնրադ Ադենաուերի հիմնադրամը՝ քաղաքական

երկխոսությունն Չարավային Կովկասում ծրագրի շրջանակներում: Մեր հետ զրույցում Լիա Խաչատրյանը մասնավորապես նշեց. «Ներկայումս ձևավորված է հստակ հանրային կարծիք՝ կնոջ հասարակական, գործնական և քաղաքական գործունեության վերաբերյալ: Բազմաթիվ հասարակական և այլ կազմակերպությունների տարիներ շարունակ իրականացրած աշխատանքներն այս ուղղությամբ իհարկե տվել են իրենց դրական արդյունքը, սակայն խնդիրը դեռևս լուծված համարելը վաղ է: Միացյալ Ազատական Ազգային Կուսակցության կողմից անցկացված մոնիտորինգի արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հայ հասարակության մեջ կիսը չի դիտվում իբրև հասարակական և քաղաքական կյանքի լիարժեք միավոր, և հանրության կարծիքը քաղաքականության մեջ ընդգրկված կանանց վերաբերյալ դեռևս, մեղմ ասած, վստահելի չէ: Ինչպես Չարությունյանի խոսքերով. «Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ կնոջ ներուժը ավելին քան բավարար է իրականացնելու թե՛ հասարակական-քաղաքական, թե՛ գործնական և թե՛ տնային տնտեսությունն վարելու գործունեություն: Իսկ Նաիրա Կարապետյանը ավելացրեց. «Հայաստանում ստեղծված վտանգավոր կարծրատիպերից անապայմանորեն հարկ է նշել նաև քաղաքականության մեջ կնոջ կերպարի փոխակերպումը՝ կանացիության կորուստ և թերի ընտանեկան կյանք: Մեր հանդիպումների արդյունքում ստացված բոլոր դրական փոփոխությունների շարքում հուսով ենք կկոտրվի նաև այդ կարծրատիպը»:

Հիշեցնենք, որ ՄԻԱԿ-ի առանձնահատկություններից թերևս ամենագեղեցիկն այն է, որ կուսակցության ներսում բարձր է գնահատվում կանանց մասնակցությունը կուսակցության գործունեությանը, և մեծ թվով կանայք են ներգրավված ՄԻԱԿ-ի շարքերում, այդ թվում և ղեկավար մարմիններում: Դիտելով վերոնշյալ փաստն իբրև հաջողված փորձ, ՄԻԱԿ-ի Կանանց ակումբը ստանձնում է սեփական օրինակով և հետևողական աշխատանքի արդյունքում փոխել հանրության կարծիքը, կոտրել առկա կարծրատիպերը թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մոտ: Կինը պետք է գիտակցի, որ նա հանդիսանում է քաղաքացիական հասարակության լիիրավ անդամ, և բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն հայ կնոջ՝ սեփական ուժերի նկատմամբ հավատի հաստատմանն ու ամրապնդմանը:

ՄԻԱԿ-ի կողմից անցկացված մոնիտորինգի արդյունքները նաև փաստում են, որ կանայք չեն տեսնում իրենց խնդիրների նկատմամբ հետաքրքրվածություն և աջակցություն նրանց լուծմանը: Կանանց ակումբի քննարկումների ընթացքում անապայմանորեն արծարծվելու են հարցեր, որոնք կբերեն վերոնշյալ կարծրատիպի վերացմանը և առաջ քաշված հիմնախնդրի լուծմանը: Իսկ սա իր հերթին մեզ թույլ կտա ունենալ առողջ և զարգացած հասարակություն:



Կնոջ աշխատանքը տղամարդկանց միջավայրում / 25.09.10

Սեպտեմբերի 25-ին կայացավ «Զրույցներ թեյի սեղանի շուրջ» քննարկումների հերթական հանդիպումը: Քննարկվող թեման բավականին արդիական և հետաքրքիր էր՝ «Կնոջ աշխատանքը տղամարդկանց միջավայրում»:

Չրավիրված էին Արմինե Չարությունյանը, ով զարմանալի կենսագրության, հետաքրքիր աշխատանքային փորձի և հարուստ հոգու տեր անձ է՝ հնագետ-պատմաբան, Երևանի պետական համալսարանի դասախոս, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից, Մարգարիտա Մարտիրոսյանը, ով ավելի հայտնի է Մագա անունով՝ «Մագավտոշոու» հեռուստատեսային հաղորդման հեղինակ և վարող, Հայաստանի վարորդների միության անդամ, Նունե Չարությունյանը, ով հանդիսանում է Կովկասի Տարածաշրջանային Բնապահպանական կենտրոնի Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն, միջազգային իրավունքի մագիստրոս, Գայանե Արսենյանը՝ «Ռեսու» ապահովագրական ընկերության տնօրենի տեղակալ, գործակալական ցանցի զարգացման բաժնի ղեկավարը:

Զրույցի հիմնական ուղղությունները բաժանվեցին երկու մասի՝ կինը աշխատավայրում՝ տղամարդկանց միջավայրում և կինը ընտանիքում, տղամարդու վերաբերմունքը կնոջ նմանատիպ աշխատանքին: Արմինեն, օրինակ բերելով իր աշխատանքային առօրյայից դրվագներ, համոզմունք հայտնեց, որ կնոջ կեցվածքը տղամարդկանց միջավայրում պայմանավորում է նրանց կողմից ընկալման տեսակը, և որ ժամանակ առ ժամանակ «փխրուն թույլ սեռի» ներկայացուցիչները պետք է բավականին կտրուկ և կոշտ քայլերի դիմեն:

Մագան իր հերթին հաստատեց այն փաստը, որ տղամարդկանց մոտ ընկալելի և ընդունելի լինելու համար պետք է նախ և առաջ ընդունել «խաղի կանոնները», ապա նոր հաստատել կնոջ համար նախընտրելի փոփոխությունները:

Հանդիպման փորձագետ Լիա Խաչատրյանը ներկաներին պատմեց կոլլեկտիվում հաստատման 3 փուլերի մասին, որի շուրջ ծավալվեց ակտիվ և բուռն քննարկում:

«Զրույցներ թեյի սեղանի շուրջ» հանդիպումների շարքը հետապնդում է գլոբալ նպատակ՝ ստեղծել կանանց համագործակցության հզոր ցանց, և այս հանդիպմանը գրանցվեց այս նպատակի արտահայտումներից մեկը՝ Նունե Չարությունյանի կողմից օրինակ բերված գյուղաբնակ կանանց հիմնախնդիրը վերածվեց գյուղական համայնքների իրավիճակի քննարկման, և Խնձորեսկ գյուղում արևային էներգիայի օգտագործման մասին առաջարկը մեծ աջակցություն գտավ Արմինե Չարությունյանի մոտ, ով անձամբ ճանաչում էր Խնձորեսկի խնդիրներով մտահոգված և աջակցելու պատրաստակամ սփյուռքահայ բարերարների: Արմինեն խստացավ կապողակ հանդիսանալ այս խնդրի լուծման համար:

Նշենք, որ սա միայն օրինակ է այն համագործակցության հաստատման, որն ակնկալվում է նախաձեռնության հեղինակների կողմից:

Նաիրա Կարապետյանի կարծիքով՝ կանանց համախմբումը հանգեցնելու է թե սոցիալական, թե մշակութային, թե հասարակական և թե այլ ոլորտներում զգալի հաջողությունների գրանցմանը:



Գեղերային քաղաքականության հայեցակարգը / 09.10.10

«Զրույցներ թեյի սեղանի շուրջ» հերթական հանդիպումն ևս անցավ անկաշկանդ և անկեղծությանը տրամադրող անմիջական միջավայրում:

Այս անգամ թեյի սեղանի շուրջ համախմբողը՝ ԶԶ գեղերային քաղաքականության հայեցակարգն էր, հրավիրված էին հյուրեր և մասնակիցներ, որոնք անտարբեր չեն մեր հանրապետության կայուն զարգացման, ժողովրդավարական գործընթացների խորացման, հասարակության կենսագործունեության կազմակերպման, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և կյանքի որակի բարձրացման հարցերի նկատմամբ:

Ինճա Զարությունյանը ներկայացրեց, որ գեղերային քաղաքականության հայեցակարգը սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունն, որը ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:

Հանդիպման փորձագետ Լիա Խաչատրյանը նշեց, որ գեղերային տարբերությունների ուսումնասիրությունը կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում վկայում է, որ գեղերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց անհավասար վիճակն է և հասարակության մեջ պահպանվող և նույնիսկ ամրապնդվող գեղերային դերերի ավանդական ընկալումները: Ակնհայտ է, որ նման իրավիճակի փոփոխությունը հնարավոր է միայն հասարակության և նրա կառուցակարգերի վրա երկարատև ազդեցություն գործող համալիր միջոցառումների իրականացման միջոցով:

Հանդիպման մասնակից, ԶԶ նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության աշխատակից Լիլիթ Պետրոսյանը ներկայացրեց, որ Հայեցակարգը նաև ենթադրում է օրենսդիր մարմնում կանանց ներգրավածության մինչև 30%-ի ապահովում, ինչը հանդիպման մասնակիցների մոտ արհեստականորեն քաղաքական վերնախավ կանանց մուտքի մտավախություն առաջացրեց:

Ի պատասխան, հանդիպման հյուրեր՝ ԶԶ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Լարիսա Ալավերդյանը, Կարինե Աճեմյանն և Լիլիթ Գալստյանը, նշեցին, որ քվոտան կնպաստի կանաց քաղաքական ակտիվացմանը, ինչը կտա իր դրական պտուղները:

Կարինե Աճեմյանի կարծիքով. «Մեր ազգի ավանդույթները խոր արմատներ ունեն, և ես էլ կողմ եմ, որ կանայք ներգրավված լինեն հասարակական-քաղաքական կյանքում, սակայն շատ կարևոր է նաև, որ կանայք միմյանց օգնել իմանան: Անշուշտ քաղաքականությունը շատ բարդ ոլորտ է, և ներգրավված կանայք էլ պետք է ըստ արժանվույն պատրաստված լինեն, թե՛ մասնագիտական, թե՛ հասարակական, թե՛ կուսակցական փորձով: Կարծում եմ այն կանայք պետք է զբաղվեն քաղաքականությամբ, ովքեր ոչ թե զոհաբերում են ընտանիքը՝ հանուն կարիերայի, այլ կարողանում են պատվով տանել ընտանիքի և քաղաքական որոշումներին, մասնակցելու ծանրաբեռնվածությունը»:

Լարիսա Ալավերդյանի խոսքերով. «Հայ կանանց մեջ պակասում է քաղաքացիական և քաղաքական դիրքորոշումը պարզորեն և խիզախորեն արտահայտելու մշակույթը»:

Անկախ այն բանից, թե ինչ ընտանիքում է դաստիարակվել աղջիկը, նա պետք է ձեռք բերի սոցիալական սովորույթներ, պիտի հասկանա՝ առանց քաղաքացու երկիրը լավ երկիր չի դառնա: Ինչպիսին հասարակությունն է, այնպիսին էլ ընտանիքն է: Եվ եթե մենք հավատքի չգանք, մեր ընտանիքը փլուզվելու է: Աստված մեզ ստեղծել է ներդաշնակ լինելու համար:

Մեր բոլոր նախագահներն էլ շատ լավ վերաբերմունք են ունեցել կանանց հանդեպ, նրանց մոտ իսպառ բացակայում էր դիսկրիմինացիոն վերաբերմունքը, սակայն կարծում եմ որքան որ վատ երևույթ է միասեռականությունն ինձ համար, այնքան էլ վատ է միասեռ կառավարություն ունենալը:

Գնահատենք մեր հոգեկերտվածքը , գործով սիրենք երկիրը և լինենք ակտիվ»:

Նաիրա Կարապետյանը հավելեց, որ Հայեցակարգը հիմնված է ՀՀ Սահմանադրության և օրենքների, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ուղղորդիչ հանդիսացող այլ միջազգային քաղաքական փաստաթղթերի վրա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության միջազգային փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարում: Ուստի, այն պետք է իրականացվի հասարակության լայն շրջանակների ընդգրկմամբ և պետական կառույցների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների սերտ համագործակցությամբ:

Լիլիթ Գալստյանն էլ իր հերթին նշեց, որ «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների կողմնակից ենք, մեր հասարակությունը կնամենձար հասարակություն է: Իրականում Հայաստանում բարձրագույն կրթությամբ կանայք գերակշռում են բարձրագույն կրթությամբ տղամարդկանց /56-60տոկոս/: Եթե թողնենք Հայաստանում հասարակական-քաղաքական կյանքի օբյեկտիվ զարգացմանը, ապա գենդերային քաղաքականության առումով շատ դանդաղ կունենանք հաջողություն, ահա ինչու կարևոր է, որ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև միջազգային պարտավորություններ, որոնք պարտադիր պետք է իրականացվեն:

Կարևորում եմ քաղաքացիական հասարակության ստեղծումը, առանց որի չեն իրականանա հավասար իրավունքները, հավասար հնարավորությունները և ի վերջո, առանց որի չիլինի ժողովրդավարություն: Անձամբ ես չեմ տարբերակում պատգամավորներին սեռային հատկանիշով, կան պատգամավորներ, որոնք ունեն քաղաքացիական կողմնորոշում, և դիրքորոշում, փորձառություն, ճիշտ արժեքային համակարգ, կամք, պետական ազգային շահի գիտակցում: Պետք է ստեղծել հավասար հնարավորությունների միջավայր, անկախ այն բանից, թե կինը կամ տղամարդը ինչով է զբաղվում, այդ ժամանակ հավասարակշռված քաղաքացի կունենանք»:

Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Լիանա Մարուքյանը, «Ջոկեր» ամսագրի խմբագիր Տաթևիկ Հովհաննիսյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության աշխատակից Աննա Վարդապետյանը, հանդիպմանը ներկա երիտասարդ կանայք, իրենց հերթին մեծ պատրաստակամություն հայտնեցին միասնաբար աշխատելու այս հարցերի լուծման շուրջ:

Քննարկվեցին բազում օրինակներ և դեպքեր կանանց՝ հասարակական գործունեության դրական և բացասական արտահայտումների վերաբերյալ, հնչեցին շատ հարցեր և պատասխաններ:

Մի հարցում բոլորն էին համակարծիք՝ կա խնդիր և կա այդ խնդրի լուծման կարող ուժ:

Կանանց ակումբի ղեկավար կազմն իր հերթին առաջարկեց մշակել գործողությունների ծրագիր, համաձայն որի պետք է սկսել հասարակական իրազեկման աշխատանքներ՝ միտված կնոջ կերպարի ներկայացմանը, իբրև երկրի և պետության զարգացման կարևոր և անմիջական մասնակցի:

Ակումբի հետ համագործակցող կանայք, անկախ քաղաքական հայացքներից և կուսակցական պատկանելիությունից, կարող են ևս միանալ այս գործը կյանքի կոչելուն:

ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՄԲ



Բիզնեսը Հայաստանում. գործարար կանայք / 16.10.10

Հավատարիմ մնալով որդեգրած սկզբունքին՝ կնոջ ներուժի ըստ արժանվույն գնահատման հարցում, և տարբեր ոլորտներում հաջողությունների հասած կանանց փորձի ներկայացման և փոխանցման նպատակին ընդառաջ՝ այս շաբաթ Կանանց ակումբը նախաձեռնել էր յուրատեսակ հանդիպում: Ընտրված քննարկման թեման բավակաին հետաքրքիր էր՝ «Բիզնեսը Հայաստանում. գործարար կանայք»:

Ինչ դժվարությունների է հանդիպում գործարար կինը Հայաստանում, ինչպիսի խոչընդոտներ են լինում նրա ճանապարհին, ինչպես կազմակերպել սեփական գործը, ինչպես կառավարել աշխատակազմ, արդյոք տղամարդկանց հետ աշխատելը դժվար է - այս և այլ շատ հարցերի շուրջ ծավալված գրույցի ընթացքում հնչեցին բազում կարծիքներ:

Հանդիպման հյուր, «Փարիզյան սուրճ» ՍՊԸ հիմնադիր-սեփականատեր Վալերի-Աշխեն Գործունյանի խորին համոզմամբ, գործին պետք է մոտենալ ամբողջ հոգով, պետք է նվիրվել բիզնեսին և սիրել այն, ինչով զբաղվում ես: Ներկայացնելով իր պատմությունը, նա փաստեց, որ բիզնեսով զբաղվող կանայք խնդիրներ ունեն հարկային դաշտի հետ. «Լինելով ֆրանսահայ՝ 15 տարի առաջ հայկական ոգին ինձ մղեց Հայաստան, ուր զարգացած չէր սուրճի արտադրությունը, և ես որոշեցի զբաղվել հենց դրանով. մտածում էի՝ հայրենիքին կարելի է օգնել ոչ միայն դրամով ու բարեգործությամբ, այլ նաև բիզնես հիմնադրելով՝ նպաստելով Հայաստանի տնտեսության աշխուժացմանը: Բայց ամենասկզբում ես իմ գործը սկսեցի ոչ թե բիզնես-պլանով և բանկային նորմերով, այլ միանգամայն էմոցիոնալ ձևով: Նաև որպես սփյուռքահայ, ինձ համար դժվար էր հարմարվել Հայաստանում ստեղծված պոստ-խորհրդային իրավիճակին, այն դեպքում երբ գերիշխում էր այսպես կոչված «մաշոյական» մշակույթը, անընդմեջ լսում էի հետևյալ համոզմունքը, որ «այստեղ ամեն երևույթ առանձնահատուկ է և նման չէ աշխարհում կիրառվող կանոններին»: Փոքր-ինչ խոչընդոտներ կային, որ կապված էին հայ տղամարդկանց մոտ գերակշռող կարծրատիպերին, թե կինը չի կարող լինել միաժամանակ գեղեցիկ կին, լավ մայր և խելացի զարգացած գործարար: Ինչ վերաբերում է հայաստանյան բիզնես միջավայրին, պետք է հաշվի առնել հայկական առանձնահատկությունները, որոնց մասին այսօր այս ակամ այն առիթով անընդհատ բարձրաձայնում ենք»:

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Վարչության անդամ, տնտեսական վերլուծության և պլանավորման դեպարտամենտի տնօրեն, «Ռասկո» ապահովագրական ընկերության խորհրդի նախագահ Օլգա Գասպարյանն այնուամենայնիվ փաստեց Հայաստանի տնտեսական իրավիճակի զարգացումը: Նրա կարծիքով. «15 տարի առաջ տնտեսական ոլորտում չկային այն հնարավորությունները, որ հիմա կան: Չի կարելի չնկատել այն առաջընթացը, որ տարեցտարի թեկուզ դանդաղ, բայց տեղի է ունենում: Կա տնտեսության զարգացման ծրագիր, որում հստակ տրված են այն մեթոդները, որոնք թույլ կտան նվազեցնել կոռուպցիան և զարգացնել մանր ու միջին բիզնեսը»:

Բանկային բնագավառում 1998թ-ից սկսած բարեփոխումները նպաստեցին բանկային համակարգի զարգացմանը, և 4 բալանոց սանդղակում Հայաստանի բանկային համակարգը զարգացման տեսանկյունից ուներ 2,7 գործակից՝ այդ ցուցանիշով անցնելով Ռուսաստանին: Մեզ մոտ իհարկե ապահովագրության ոլորտը զարգացած չէ այնպես, ինչպես աշխարհի զարգացած այլ երկրներում: Մենք սովոր չենք կիրառել ապահովագրական մշակույթը, առաջին հայացքից թվում է՝ մեր ինչևէրի՞ն է պետք ավտոմեքենաների ապահովագրությունը, սակայն գլոբալ քաղաքակրթության զարգացումն ու ինտեգրումը թելադրում է ապահովագրական ոլորտի աստիճանական զարգացում, մյուս կողմից արդեն հասարակության շրջանում պահանջարկ է առաջացել դիմել ապահովագրությանը՝ այս կամ այն խնդիրներն ավելի

քաղաքակիրթ ձևով լուծելու համար»:

Տիկին Գասպարյանը չհամաձայնեց ինգա Ջարությունյանի այն պնդմանը, թե ամբողջ աշխարհում կանայք ավելի ակտիվ են դառնում, սակայն Ջայստանում առայժմ կնոջ հանդեպ վերաբերմունքը մնացել է նույն տեղում. «Ես չեմ կիսում այդ կարծիքը, որովհետև իմ դեպքում դա այդպես չէ: Ես էլ, ամուսինս էլ միշտ շատ զբաղված ենք եղել, և դա դիտվել է իբրև բնական երևույթ: Միշտ պետք է հաշվի առնել ազգային մտածողության առանձնահատկությունները, երբեք պետք չէ հայ տղամարդուն ցույց տալ, որ դու նրանից ավելի հզոր ես: Կարծում եմ, միայն հասկացող ամուսնու կողքին հայ կինը կարող է զբաղվել և գործարարությամբ, և ընտանիքով»:

GPM Group (ԳեոՊրոՄայնինգ) ընկերության արտաքին և հանրային կապերի վարչության ղեկավար Ռուզաննա Գրիգորյանի կարծիքով, յուրաքանչյուր գործարար կին նախ և առաջ պետք է պահպանի իր կանացիությունը, որպեսզի նրան առաջին հերթին ընկալեն, իբրև հարգանքի և սիրո արժանի կին, ապա նոր միայն գործարար կին, որ կանացի պարզ երջանկությունը նկատվի նրանց աչքերում: «Երբ հայրս զոհվեց Ղարաբաղյան պատերազմում, մեր ընտանիքը շատ ծանր էր ապրում, այնքան ծանր, որ մայրս ստիպված էր վաճառել ողջ ունեցածը՝ իր երկու զավակներին կրթության տալու համար: Ես չեմ ամաչում ու չեմ թաքցնում այս ամենը, քանի որ սա կարևոր ճանապարհ էր իմ կայացման գործում, որը պետք է անցնեի: Ես հաջողակ էի, որ ունեցա լավ ղեկավար, որից շատ բան եմ սովորել: Ամեն ինչին հասել եմ ինքս՝ աստիճանաբար: Իհարկե լավ միջավայրում եմ աշխատել, դա էլ շատ կարևոր է: Լինելով շատ զբաղված մարդ՝ չեմ մոռանում, որ կին եմ, նկատի ունեմ մեր տան այն ջերմ մթնոլորտը, որ ինքս եմ ստեղծել: Խոչընդոտներ իհարկե կան կանանց համար, օրինակ բամբասանքները, սակայն երբ շատ զբաղված ես լինում աշխատանքով, ժամանակ էլ չի լինում ուշադրություն դարձնել այդ բամբասանքներին»:

Դիզայներ Սիրանուշ Օհանյանը, անդրադառնալով կնոջ աշխատանքային ուղու խոչընդոտներին, նշեց երիտասարդ կնոջ հանդեպ իբրև մասնագետ անվստահության փաստը. «Ես դիզայնով եմ զբաղվում, ինձ որպես երիտասարդ մասնագետի, նույնպես դժվար էր կոլեկտիվում, բայց ինքս ինձ ասում էի. «Չամբերի և ցույց տուր ինչի ես ունակ, հետո կլուծվեն նաև մնացած հարցերը»: Եթե երիտասարդ աղջիկ ես, քեզ սկզբում լուրջ չեն ընկալում, դա մի փոքր ճնշում է»:

Նաիրա Կարապետյանը առաջ քաշելով կանանց համագործակցության գաղափարը, ներկաներին հարց ուղղեց, թե ինչ է կարող անել կինը կնոջ համար:

Վալերի-Աշխենի առաջարկի հետ համաձայնեցին բոլորը՝ լոբբինգ: Կանայք պետք է միավորեն ուժերը՝ իրենց իսկ խնդիրները շահեկան տեսանկյունից ներկայացնելու համար: Ահրաժեշտ է կոտրել կանանց միջև համագործակցության ձախողման կարծրատիպը և տարածել կանանց փոխօգնության մշակույթը:

Չրույցին փոքր-ինչ ուշացումով միացավ «Լիտտե» նորարարական բժշկության կենտրոնի ղեկավարն Քրիստինա Նազարյանը:

Կանայք մեկ անգամ ևս փաստեցին համագործակցության մեկնարկը, և շնորհակալություն հայտնելով Ակումբի հիմնադիրներից, խոստացան միասնական աշխատանքում ապահովել իրենց արժեքավոր մասնակցությունը:



Յայ կնոջ ժպիտը / 06.11.10

Որտեղ է մնացել հայ կնոջ ժպիտը. սա այն բազմաթիվ հարցերից մեկն էր, որ քննարկվեց Կանանց ակումբում՝ հերթական «Թեյի սեղանի շուրջ»:

Որն է հայ կնոջ ներկայիս կերպարը, ինչ փոփոխություններ է կրել այդ կերպարն հատկապես 90-ականներից հետո: Յայ կնոջ ներհոգեկան փոփոխություններն իրենց հերթին ինչպես են անդրադառնում ընտանիքի և անգամ՝ ողջ հասարակության վրա: Որքան ջերմ էր մթնոլորտը «Թեյի սեղանի շուրջ» այնքան նաև եռացող էին մտքերն այս ու այլ հարցերի վերաբերյալ: Քննարկումն անկաշկանդ էր, չէ որ այն առնչվում էր հայ կնոջը, կնոջ, որ սեփական ժողովրդի ինքնագիտակցության մեջ միշտ դիտվել է նախ որպես մայր, սերնդի կրթող, ապա՝ ընտանիքի սյան՝ տղամարդու հենարան: Յայ կնոջ դերի եվ խնդիրների, դրանց լուծման շուրջ քննարկումների առանցքում էր այն արդիական հարցը՝ որն է երբեմնի կարեկից հայ կնոջ անտարբերության եվ առանձնացվածության պատճառը: Միթե դժվարին 90-ականներին շատ ավելի հեշտ էր լինել սրատացավ, քան հիմա:

Այս և այլ հարցերի քննարկման ընթացքում հանդիպմանը ներկա կանայք մի հարցում համակարծիք էին՝ մանուկ հասակից կրթված և կայացած քաղաքացին է պայմանավորում առողջ հասարակության գոյությունը: Հանդիպման հյուր ՅՅ Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների շնորհման վարչության պետ Ջեմմա Հակոբյանը, խոսելով բռնադատված կանանց հոգեբանության և ներման դիմած ազատագրկման մեջ գտնվող քաղաքացիների մասին, փաստեց, որ մեզանում առկա է բացասական և անջատողական վերաբերմունք փշալարից այն կողմ գտնվող մարդկանց հանդեպ, այնինչ իրականում այնտեղ ևս կան բարդ ճակատագիր ունեցող և հանգամանքների զոհ հանդիսացող շատ մարդիկ, ովքեր, անգամ ներում ստանալուց հետո, դուրս են մնում հասարակությունից: Ըստ հոգեթերապևտ Մարիամ Ավետիսյանի՝ մեր կողմից այս մարդկանց մերժման հիմքում ընկած են հոգեբանական շատ պատճառներ, որոնցից հիմնականը երեխաների դաստիարակության ընթացքում այս հարցի բացն է:

Որն է հայրենասիրական դաստիարակության և երեխաների հանդեպ սեփականատիրության զգացման սահմանագիծը..

Հանդիպման մեկ այլ հյուրի՝ ՅՅ վաստակավոր արտիստ Շուշան Պետրոսյանի կարծիքով, երեխայի կրթությամբ և դաստիարակմամբ պետք է զբաղվել դեռևս երեխայի ներարգանդային շրջանից. իր որդիների օրինակով նա համոզվել է դրանում: Երեխան մանուկ հասակից է սկսում գիտակցել իր կյանքի ուղին, և չի կարելի ուղղորդել նրան իր համար անցանկալի այս կամ այն բնագավառ: Խոսելով զինվորական ծառայության մեջ գտնող երիտասարդների հայրենասիրական կերպարի մասին՝ նա հպարտորեն նշեց, որ բանակում, նամանավանդ սահմանում, ամեն ինչ ստանում է ճշգրիտ երանգներ: Այս հարցում մեծ է զինվորի մայրերի դերը: Իսկ այն հարցին, թե արդյոք իր որդիները ժամանակին չեն խուսափի զինվորական ծառայությունից, նա պատասխանեց. «Այդ դեպքում զուր կլինի իմ անցած ամբողջ ճանապարհը»:

Մինչև ուշ երեկո տևած հանդիպման ընթացքում ակումբի հիմնադիրներն ու հյուրերը պատրաստակամություն հայտնեցին կանանց համագործակցության հաստատման հարցում:



Կնոջ դերը հանրային իրազեկման գործընթացում / 20.11.10

Տեղեկատվական բաց, տեղեկատվության ավելցուկ, թե՛ ի վերջո՝ ապատեղեկատվություն: «Չրույցներ թեյի սեղանի շուրջ» կանանց ակումբի այս հավաքի քննարկման թեման էր կնոջ դերը տեղեկատվության տարածման և հանրային իրազեկման գործընթացում: Մեր օրերում՝ տեղեկատվական դարում, ինչպես չմոլորվել տեղեկատվության հսկայածավալ հորձանուտում: Ինչպես ընտրել ճիշտ տեղեկատվություն, ինչպես հանդիսանալ միջնորդ ցանկալի և անցանկալի տեղեկատվության և այդինֆորմացիան սպառողների (տվյալ դեպքում՝ սեփական ընտանիքի և հատկապես՝ երեխաների) միջև: Կամ, ընդհանրապես, հնարավոր է դա: Շատ ու շատ հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում էին տեղեկատվություն կրող հայ կնոջը, քննարկվեցին թեյի սեղանի շուրջ: Քննարկումն ավելի քան բուռն էր, պատասխանները՝ երբեմն խիստ հակասական, երբեմն՝ միմյանց լրացնող:

Ինչ տեղեկատվություն է այսօր ստանում հայ կինը, ինչ ճանապարհներով, կան արդյոք վերահսկումներ տեղեկատվության տարածման ընթացքում: Ինչ վերապահումով է մոտենում հայ կինը իրեն հաղորդվող ինֆորմացիային, ինչքանով է իրեն շրջապատող տեղեկատվությունը ներագրում սեփական բարոյահոգեբանական նկարագրի վրա:

Հիմնական մտահոգությունը հեռուստատեսային հաղորդումների որակի և հետևաբար նաև հեռուստատեսության կողմից հասարակության դաստիարակության ներկա իրավիճակի վերաբերյալ էին: Եթե համացանցի տեղեկատվության ընտրությունն ավելի ճկուն է և թույլ է տալիս ինքնուրույն կողմնորոշվելու տեղեկատվության աղբյուրի ընտրության հարցում, ապա հեռուստատեսության միջոցով մատուցվող ինֆորմացիան սահմանափակված է որակական շրջանակներով: Կինն իբրև հասարակության կրթման առաքելության կրող պետք է առաջին հերթին ապահովի կիրթ քաղաքացու կերպարի ձևավորումը: Իսկ այս դժվարին գործի հաջողության համար միանշանակ պետք է որակյալ և բարձրակարգ տեղեկատվական բազա: Հանդիպման հյուր, «Կնոջ հմայքի գաղտնիքները» հաղորդաշարի հեղինակ Չարուհի Հայրապետյանը, ներկայացնելով հեռուստատեսային հաղորդակցման ազդեցության չափանիշները, նշեց որ հանրային կարծիքի ձևավորման համար անհրաժեշտ է քողարկված քարոզ՝ նույն հեռուստատեսիվների, հաղորդումների, գովազդների համապատասխան մատուցման տեսքով:

ՀՀ վաստակավոր արտիստ, արվեստի գործիչ Սոֆի Դևոյանի պնդմամբ, կնոջ դերը պետք է կայանա ոչ միայն ինֆորմացիայի ընկալման և մատուցման մեջ, այլև սեփական օրինակի, կյանքի հանդեպ դրական տրամադրվածության փոխանցման մեջ:

Մեր օրերում, երբ գիտությունը, տեխնիկան, տեխնոլոգիաները ծառայում են մի գերնպատակի՝ տեղեկատվության հավաքման և տարածման, չափազանց կարևոր է կնոջ բազմակողմանիորեն տեղեկացված լինելը. սա էր մասնակիցների ընդհանուր կարծիքը: Միայն ինֆորմացված կինն է ի գորու ընտրել և սպառել ճիշտ տեղեկատվությունը՝ մատուցված հազարավորներից:

Նշենք, որ այս հանդիպմանը ներկա էր նաև Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի Հարավային Կովկասի ծրագրերի ղեկավար Կատյա Քրիստինա Պլատեն, ով համոզմունք հայտնեց Կանանց ակումբի այս գեղեցիկ նախաձեռնության անխուսափելի հաջողության վերաբերյալ:



Կինն իբրև մշակութային արժեքների պահպանող և փոխանցող / 11.12.10

Հազարամյակների խորքից մեզ հասած մշակութային ժառանգության արժեքը անգնահատելի է, այն մեր՝ իբրև մարդկային կերպի պահպանման հիմնական գրավականն է: Մեծ է այս ամենի պահպանման մեջ կնոջ դերը, շատ են պատմական օրինակները, երբ հայ կինը, գերադասելով մշակութային և ազգային շահը անձնականից, կարողացել է այն պահպանել և հասցնել մեզ: Հիշենք Մեծ Եղեռնի ժամանակ կանանց հերոսությունները, երբ կյանքի գնով համընդհանուր կոտորածից փրկում էին գրքերը...

Կանանց ակումբի հերթական հանդիպումը հոբելյանական էր, սա արդեն ակումբի 10-րդ հանդիպումն էր: Ով է կինը հասարակական կյանքում, մշակույթում, ինչ բեռ է ծանրացած կնոջ ուսերին, ինչ պատասխանատվություն է կրում կինը մշակութային արժեքների պահպանման և ժառանգման գործում:

Ակումբի հյուր ՅՅ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն ուներ իր հստակ պատասխաններն այս հարցերի վերաբերյալ, նրա բնորոշմամբ հատկապես մշակույթի ոլորտում պարտադիր է կնոջ ներկայությունն ու մասնակցությունը: Քանզի ի սկզբանե կնոջն է վերապահված ոչ միայն սերունդ ծնելու, այլև ապագա սերնդի ձևավորումն ու նրա որակիակը ապահովվում:

Խոսելով կնոջ դերի մասին, նա նշեց, որ կնոջ կյանքը կոմպրոմիսների շարք է, ուժեղ և խելացի կինն իր կեցվածքով կարող է պահպանել համերաշխությունը ինչպես ընտանիքում, այնպես էլ աշխատավայրում: Երկար տարիներ աշխատելով այս բարձր պաշտոնում՝ նա փաստեց, որ իր համար առաջին տեղում միշտ եղել է և մնում է ընտանիքը:

Նախարարն ընդգծեց, որ աշխատանք- ընտանիք հարաբերություններում աշխատանքին գերապատվություն տալիս անպայմանորեն միշտ տուժում է ընտանիքը: Իսկ սերնդի ձևավորման հարցում չափազանց կարևոր է, որ մայրերը փոքրահասակ երեխաների կողքին լինեն: Ոչ միայն հոգեբանները, այլև կյանքի փորձն է մարդկությանն ապացուցել, որ կյանքի առաջին տարիներն հսկայական ազդեցություն են ունենում մարդու ձևավորման և ամբողջ կյանքի վրա, ուստի անհրաժեշտ է մայրերին հենց այդ ընթացքում լինել երեխաների կողքին՝ այդպիսով այսօր արդեն ձևավորելով վաղվա սերնդի որակը:

Մշակույթի նախարարն ու արվեստի վաստակավոր գործիչ Շուշան Պետրոսյանը խոստովանեցին, որ կնոջ համար նույնքան և թերևս՝ առավել հաճելի է գնահատված լինել հենց թեկուզ խոհանոցում: Այդ ամենով հանդերձ, ինչպես նշեց Շուշան Պետրոսյանը մեծագույն մշակույթը կենցաղային չդառնալն է:

Ծավալված գրույցի ընթացքում քննարկվեցին շատ հարցեր՝ մշակույթի և գրական ժառանգության հանդեպ առկա դրսևորումների, երիտասարդների նախասիրությունների և այլնի մասին: Օրը լի էր հետաքրքիր առաջարկներով՝ ՅՅ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը Կանանց ակումբին առաջարկեց համագործակցել՝ մշակութային կոթողների պահպանման, նաև հայ մշակութային գործիչների՝ երիտասարդ սերնդին ներկայացնելու գործում:

«Կոնվերս» բանկի աշխատակից, Կանանց ակումբի անդամ Դիանա Ավետիսովան ներկաների պատմեց մանկատան երեխաների համար նվերներ գնելու իրենց նախաձեռնության մասին՝ կոչ անելով միանալ նրան:

Հանդիպման հյուր վաստակավոր արտիստ Շուշան Պետրոսյանը, ով նախաձեռնել և իրականացնում է սահմանամերձ գորամասերի համար համերգների շարք, առաջարկեց Կանանց ակումբին իրականացնել գրքահավաք՝ գորամասեր ուղարկելու համար:

Առաջարկներն ընդունվեցին մեծ ոգևորությամբ:



Ինչ է ուզում կինը / 25.12.10



Հավերժական հարց, որ բոլոր ժամանակներում հուզել և միաժամանակ ներշնչանքի աղբյուր է հանդիսացել թե՛ բանաստեղծների, թե՛ փիլիսոփաների, թե՛ կինոռեժիսորների համար: Այս հարցն ամենից շատ սակայն հուզել և հուզում է հենց կնոջ կողքին գտնվող տղամարդուն: Ի տարբերություն, սակայն բոլոր-բոլորի, ովքեր կարծում են, թե կինն այնքան փոփոխական է, որ անգամ չգիտի՝ ինքն ինչ է ուզում, Կանանց ակումբում թեյի սեղանի շուրջ հավաքվածները, քննարկեցին, եկան այն համոզման ու փաստեցին, որ

կինը, եթե նույնիսկ բարձրաձայն չի խոստովանում կամ ձևացնում է, թե ինքը չգիտի՝ ինչ է ուզում, ապա դա մի՛ֆ է. Կինը քաջ գիտի, թե ինչ է ուզում, ինչի է ձգտում և ուր է գնում:

Կանանց ցանկությունների և ձգտումների մասին քննարկումը շատ բուռն էր, հարցերի և պատասխանների շղթան՝ անընդհատ ձգվող, հարցերը պատասխաններ էին ծնում, պատասխանները՝ նոր հարցեր առաջ բերում:

Որն է կանանց անբավարարվածության պատճառը, ինչ է հարկավոր կնոջը երջանիկ լինելու համար: Քննարկումների ընթացքում ծափերով ընդունվեց այն պարզ ճշմարտությունը, որը բոլորը գիտեն, սակայն երբեմն չեն խոստովանում, որ կնոջը երջանիկ լինելու համար նախևառաջ ՍԵՐ է հարկավոր: «Սերն է կյանքի շարժիչ ուժը,-նշեց թեյի սեղանի շուրջ գրույցի մասնակիցներից մեկը:- Իրականում երջանիկ է կինը, երբ գիտակցում է, որ սիրված է»:

Այն ինչ կինն ունի, իր ձգտումների և նպատակների հստակ գիտակցման արդյունք է: Նպատակին հասնելու համար պետք է իմանաս, թե ուր և ինչպես ես գնում:

«Ես երբեք չեմ ձգտել պաշտոնների, պարզապես ինձ վստահված գործը միշտ ձգտել եմ կատարելիավագույնս,-ասաց հանդիպման հյուր, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Հանդիպմանը ներկա կանանց ու աղջիկներին, որոնք կուզենային հետագայում պետական պաշտոններ զբաղեցնել, նա մի քանի խորհուրդներ տվեց. «Կինն իր գիտելիքներով միշտ պետք է տղամարդուց առավել լինի, ոչ թե հավասար, միայն առավել լինելու դեպքում տվյալ աթոռը կտրվի հենց կնոջը: Եվ չափազանց կարևոր է ամեն ինչի հասնել աստիճանաբար, թռիչքները ոչ մի լավ բան չեն տա, գուցե այդ պահի համար հաճելի է, բայց անկումն ավելի ցավոտ և արագ կլինի, միայն շատ ճանապարհ անցած և գիտելիքով հարուստ կինն իր պաշտոնում հաջողություն կհասնի, հարգանք կվայելի»:

21-րդ դարը գիտելիքի դար է: Մարդու ուժն հիմա իր գիտելիքն է: Սփյուռքի նախարարը մասնակիցներին հորդորեց շարունակ սովորել և ինքնակատարելագործվել՝ սովորել ամեն վայրկյան, գիտելիք կորզել թե՛ մեծից, թե՛ փոքրից, թե՛ հասակակցից, թե՛ գրագետից և թե՛ անգրագետից: «Եվ բնավ պետք չէ բարձրագույն կրթության կատարյալ լինելը տեսնել միայն արտերկրում», - նշեց Հրանուշ Հակոբյանը:





Նաիրա
Կարապետյան
Կանանց
Ակումբ
հիմնադիր




Ինգա
Հարությունյան
Կանանց
Ակումբ
հիմնադիր



Լիա
Խաչատրյան
Կանանց
Ակումբ
հիմնադիր



Լիանա
Մարուքյան
Կոնրադ
Ադենաուեր
հիմնադրամի
Հայաստանյան
գրասենյակի
ղեկավար



Մարիամ
Առաքելյան
Կոնրադ
Ադենաուեր
հիմնադրամի
Հայաստանյան
գրասենյակի
ղեկավարի
օգնական




Անայա
Բալաբեկյան
Միացյալ
Ազատական
Ազգային
(ՄԻԱԿ)
կուսակցության
անդամ



Նազենի
Րովհաննիսյան
Հանրային
հեռուստա-
ընկերության
հաղորդավար,
դերասան



Նարինե
Թուփիկյան
Րովհաննես
Թումանյանի
տուն-
թանգարանի
տնօրեն



Նվարդ
Մելքոնյան
ԵՊՀ
սոցիոլոգիայի
ամբիոնի
դոցենտ,
սոցիոլոգիա-
կան գիտու-
թյունների
թեկնածու



Հռիփսիմե
Մարգարյան
Նկարիչ-
դիզայներ



Գայանե
Արսենյան
Ռեստ ապահո-
վագրական
ընկերություն,
տնօրենի տեղա-
կալ, գործակա-
լական ցանցի
զարգացման
բաժնի
ղեկավար




Չարուհի
Արմաղանյան
Չայկովսկու
անվան
երաժշտական
դպրոց,
ուսուցիչ



Լուսինե
Հակոբյան
Արմենիա ՅԸ,
Կառավարության կողմից
սահմանված
չափորոշիչ-
ների
վերահսկող



Տաթևիկ
Գևորգյան
ՄԻԱԿ
կուսակցության
վերստուգիչ
հանձնաժողովի
Նախագահ



Ստելլա
Դավթյան
ՄԻԱԿ
կուսակցության
խորհրդի
անդամ



Մելանյա
Մեղումյան
Լրագրող



Մագա
Մարտիրոսյան
Հանրային
երկրորդ
հեռուստա-
ընկերության
հաղորդա-
վարուհի, կին
վարորդների
ֆեդերացիայի
Նախագահ



Արմինե
Հայրապետյան
Պատմաբան,
ինժեգետ,
ԵՊՀ դասախոս,
Պաշտպանու-
թյան Նախարա-
րության
ռեֆերենտ



Նուսե
Հարությունյան
Կովկասի
տարածաշրջա-
նային
բնապահպա-
նական
կենտրոնի
Հայաստանյան
մասնաճյուղի
տնօրեն



Կարինե
Աճենյան
ՀՀ Ազգային
ժողովի
պատգամավոր



Լարիսա
Ալավերդյան
ՀՀ Ազգային
ժողովի
պատգամավոր



Լիլիթ
Գալստյան
ՀՀ Ազգային
ժողովի
պատգամավոր



Լիլիթ
Պետրոսյան
ՀՀ Նախագահի
աշխատակազմ
Փորձաքննու-
թյան և
վերլուծության
վարչության



Աննա
Վարդապետյան
ՀՀ Նախագահի
աշխատակազմ
Փորձաքննու-
թյան և վերլու-
ծության
վարչության




Տարթևիկ
Չոփիանսիայան
«Ձուկեր»
ամսագրի
խմբագիր



Նիկոլ Փիլոյան
ՄԻԱԿ
կուսակցության
խորհրդի
անդամ



Չարուհի
Ղուկասյան
ՄԻԱԿ
կուսակցության
անդամ



Աննա
Բուղադյան
Դիվանագետ



Վալերի Աշխեն
Գործունյան
«Փարիզյան
սուրճ» տնօրեն




Օլգա
Գասպարյան
Արդշինիվեստ-
բանկ խորհրդի
անդամ, ՌԱՍԿՈ
ապահովագրա-
կան
ընկերության
խորհրդի
նախագահ



Ջրիստինա
Նազարյան
«Litte»
տորարարական
բժշկության
կենտրոնի
տնօրեն



Սիրանուշ
Օհանյան
Պրոֆ ԱԼ
ընկերության
նախագծման
և ներմուծման
բաժնի
ղեկավար,
դիզայներ



Ռուզաննա
Գրիգորյան
GPM Gold,
Արտաքին
կապերի
պատասխա-
նատու



Լիլիթ
Կարապետյան
Բժիշկ-
ակնաբուժ



Թամարա
Գուրգենյան
Լրագրող



Ջենմա
Չախարյան
ՀՀ Նախագահի
աշխատա-
կազմ, Ներման,
քաղաքացի-
ության,
պարգևների
և կոչումների
վարչության
պետ



Շուշան
Պետրոսյան
ՀՀ
վաստակավոր
արտիստ



Մարիամ
Ավետիսյան
Հոգեբան,
հոգեթերապևտ



Մարիամ
Գևորգյան
ՌԱՍԿՈ
ապահովագրա-
կան
ընկերության
խորհրդի
Նախագահի
օգնական



Կատյա
Քրիստինա
Պլատե
«Քաղաքական
Երկխոսություն
Հարավային
Կովկաս»
տարածաշրջա-
նային ծրագրի
ղեկավար



Սոֆի Դևոսյան
ՀՀ մշակույթի
գործիչ



Չառա
Չատինյան
KFW բանկ,
Հայաստանյան
համակարգող



Դիանա
Գագիյան
ԱՄՆ առևտրի
պալատի
տնօրեն



Չարուհի
Կարապետյան
Հանրային
հեռուստա-
ընկերության
և ռադիոյի
հաղորդավար



Կիկտորիա
Սուքիասյան
ՀՀ մշակույթի
Նախարարու-
թյուն,
մշակութային
ծրագրերի
կառավարման
և մոնիտորինգի
վարչության
պետ



Դիանա
Ավետիսովա
Կոնվերս բանկ
պրոդուկտների
զարգացման
վարչություն



Հասմիկ
Հակոբյան
Հոգեբան,
հոգեթերապևտ



Նարինե
Բալայան
Մանկաբարձ-
գինեկոլոգ



Նունե
Սուքիասյան
Մնջախաղի
Պետական
Թատրոն,
դերասան



Հասմիկ
Պողոսյան
ՀՀ Մշակույթի
Նախարար



Կարինե
Ղազինյան
ՀՀ Արտաքին
գործերի
փոխնախարար



Անուշ
Ոսկանյան
Հոգեբան



Արինա
Իկիլիկյան
Հայ-ռուսական
/Սլավոնական/
համալսարան,
դասախոս




Հրանուշ
Հակոբյան
ՀՀ Սփյուռքի
Նախարար



Նունե
Գաբրիելյան
«Պրեմիում
Ինգրեդիենթս»
ՍՊԸ տնօրեն



Նունե Արագչյան
«Արտ Գլոբալ»
տպագրատան
փոխտնօրեն



Հռիփսիմե
Չատիկյան
ՄԻԱՍԻՆ
երիտասար-
դական
շարժում,
ծրագրերի
համակարգող



Չառա
Հայրապետյան
ԵՊՀ
սոցիոլոգիայի
ֆակուլտետ,
դասախոս



Անի
Սուքիասյան
ՀՀ Սփյուռքի
Նախարարի
օգնական